

# ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՕՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ

## ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՑԱՆ

Բ.Գ.Թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հայերի՝ իրենց բնաշխարհից աշխարհագրականորեն հեռու տարածքներում հայտնվելը վաղուց ի վեր դադարել է արտառոց երևույթ ընկալվել: Մշտապես դեպի նորանոր հորիզոնների ձգտող հայ ժողովրդի զավակները թափանցել են մինչև անգամ մայրցամաքների ծայրամասերը, հիմնական բնակավայրերից հեռու գտնվող ու նվազ բնակեցված շրջանները՝ Հարավային Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և Նոր Զելանդիա ու մինչև անգամ՝ Արկտիկայի նախաշեմ, Ալյասկա և կամ Խաղաղ օվկիանոսի արևմտյան ու կենտրոնական հատվածներում գտնվող հարյուրավոր կղզիներից կազմված Օվկիանիա<sup>1</sup>:

Սույն հաղորդումը վերաբերում է վերջին աշխարհաքաղաքական տարածաշրջանում հայերի սակավաթիվ ներկայության փաստերին: Եթե Ավստրալիայում ու Նոր Զելանդիայում 19րդ դարից սկսած հայտնվել են հայեր<sup>2</sup>, և հետագա դարում կազ-

---

<sup>1</sup> Այս տեղանունը ժամանակին հայերեն թարգմանվել է Օվկիանոսք՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում և Հայաստանի նկարիչների միությունում բացված ֆրանսիացի նկարիչ Նիկոլայ Միշուտուշկինի՝ իսաղաղօվկիանոսյան կղզիների բնիկների արվեստի և արհեստի գործերի հավաքածուի կապակցությամբ (տե՛ս Օվկիանոսքի ազգագրությունն ու արվեստը. Յուցահանդեսի ուղեցույց, Սարդարապատ, 1981), սակայն շինծու լինելով՝ իրավամբ չի մտել շրջանառության մեջ:

<sup>2</sup> Ընդունված էր այն կարծիքը, թե առաջին հայն Ավստրալիա է մեկնել 1918-ին, իսկ համայնքի հիմքը դրվել է Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ այդ մայրցամաք են գաղթել 30 հայեր՝ Լիբանանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Պաղես-

մավորել է համայնք, որի պատմությունն այս կամ այն չափով ուսումնասիրված է<sup>1</sup>, ապա Օվկիանիայում հատուկենտ հայերի ներկայությունը տակավին չի քննվել<sup>2</sup>: Այս տարածաշրջան պարզապես ճանապարհորդած հայերի թիվն անգամ մեծ չէ<sup>3</sup>, չխոսե-

---

տինից և Եգիպտոսից (տե՛ս Գաղույթ գաղութ, Յառաջ, Փարիզ, 29.03.1952): Մակայն հայազգի ավստրալական պատմաբան Նադյա Բայթը պարզել է, որ դեռևս 1857-ին Ավստրալիայի Վիկտորիա քաղաքում ապրել է առնվազն 17 հայ (տե՛ս **Wright Nadia**, Armenians in Victoria, Australia, in the Nineteenth Century, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուս, հտ. ԻԸ., 2008, էջ 61-88):

<sup>1</sup> Տե՛ս Աւստրալիոյ հայ գաղութը, «Նոր երկիր», Աթենք, 15.07.1928: Armenians in Australia and New Zealand, compiled by Aramais Mirzaian, Sydney, 1966. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 86-91:

<sup>2</sup> Այստեղ չենք անդրադառնա Լեյլա Գ. Ստեփանյանի այն դրույթին, համաձայն որի Պոլինեզիայի բնիկների նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է՝ հիմնված պոլինեզիական լեզուների (մասնավորապես՝ ռապանուերենի) և հայերենի, ինչպես նաև երկու ժողովուրդների դիցարանների և տեղանունների զուգահեռ քննության վրա (տե՛ս **Ստեփանյան Լ.**, Հայ-պոլինեզյան լեզվաբանական կոնտակտներ, Երևան, 2015):

<sup>3</sup> 1954-ին Հավայան կղզիներում և Ֆիջիում է եղել հոգևորական Աստղիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը, իր հողվածում վկայել այդ կղզու բնիկների, նաև՝ առաջինի հայազգի բնակիչների մասին (Աստղիկ ծ. վրդ., Ման Ֆրանսիսկոյեն դէպի Սիտնի, «Սիտն», Երուսաղեմ, 1955, Փետրուար, թ. 2, էջ 6062, Մարտ, թ. 3, էջ 91): Օվկիանիա հազվադեպ այցելել են հայ արվեստագետներ և գիտնականներ Խորհրդային Միությունից: Թերևս առաջինը եղել է ծնունդով հայաստանցի ճանապարհորդ Ալեքսանդր Երվանդի Պողոսովը (1908±), որը 1965-ին ԽՍՀՄ ԳԱ «Վիտյակ» նավով մասնակցել է աստղագիտական արշավախմբին որպես պետի տեղակալ, մեկ ամիս ապրել Քուքի կղզիներում, այցելել Արևմտյան Սամոա, Հավայան կղզիներ, Թաիթի և այլուր: 1970ին Պողոսովը դարձյալ արշավախմբի պետի տեղակալի պաշտոնով մասնակցել է մեկ այլ գիտարշավի՝ այցելելով Պապուա Նոր Գվինեա, Ֆիջի, Նոր Կալեդոնիա, Նաուրու, Արևմտյան Սամոա (տե՛ս Պողոսովը Զեյլուսկինյան լեզենդից, հարցազրույցը վարեց Հովհաննես Այվազյանը, «Գարուն», Երևան, 1986, թ. 3, էջ 72): 1971-ին հայ բուսաբան, ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը (1910–2009) մասնակցել է խաղաղօվկիանոսյան ծովային արշավախմբին, այցելել Ֆիջի, Սամոա, Պապուա Նոր Գվինեա, Նոր Կալեդոնիա, Լոդո Ջաու կղզում ուսումնասիրել է տեղական բուսաշխարհը, որը գրեթե անհայտ է եղել:

լով ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատածների մասին: Հիմնական վայրերը, որտեղ ապրել են հայեր, հանրահայտ Թաիթի կղզին է և ԱՄՆ-ի հիսունմեկերորդ նահանգը հանդիսացող Հավայան կղզիները, որտեղ մինչև անգամ կա փոքրաթիվ համայնք:

Սկսած 16-րդ դարից՝ եվրոպացի ճանապարհորդներն ուսումնասիրել են Օվկիանիայի կղզիները, որոնք 18-րդ դարում սկսել են գաղութացնել եվրոպական տարբեր երկրներ, և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը սկսել էր մատչելի դառնալ եվրոպացի ընթերցողին: 18րդ դարում Վենետիկում տպագրված հայալեզու քարտեզներում «Ծով Հարաւային կամ Խաղաղական»ում արդեն հիշված են Օվկիանիայի որոշ կղզիները, մասնավորապես՝ «Կղ. Մարքեզի մենտոզեան»ը: Իսկ հայալեզու տպագիր գրականության մեջ, որքանով պարզել ենք, Օվկիանիան առաջին անգամ հիշատակվել է Ստեփանոս Ազոնցի աշխարհագրության գրքում, որտեղ կան նաև այս տարածաշրջանի վերաբերյալ առանձին գլուխներ՝ «Կղզիք Ընկերութեան», «Դաիդի կամ Օդաիդի», «Կղզիք Բարեկամաց» և «Օվայիհի կամ Օվիէլէ»<sup>1</sup>:

---

1977-ին խորհրդային պատվիրակության կազմում Ավստրալիա և Ֆիջի է ճամփորդել գրող Արտաշես Քալանթարյանը, հանդես եկել այդ մասին ուղեգրությամբ (տե՛ս **Քալանթարյան Ա.**, Ֆիջի, «Մովետական գրականություն», Երևան, 1977, թ. 10, էջ 105-122): 1997-ին Թաիթի և Բորաբորա կղզիներում վավերագրական կինոնկարներ է նկարահանել Ստաս Նամինը (Անաստաս Միկոյան): Հիշենք նաև, որ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ՀՀ ԳԱԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտի գիտաշխատող Լևոն Աբրահամյանը 1978 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ Ավստրալիայի և Օվկիանիայի բնիկների մշակույթի վերաբերյալ:

<sup>1</sup> Տե՛ս Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի... Աշխատասիրութեամբ **Տ. Ստեփանոսի Գիւվէր Ազոնց.** 1805, Վենետիկ, էջ 418440:

## ՊԱՊՈՒՄ ԵՄ ԳՎԻՆԵԱ

Քննվող տարածաշրջանում հայտնված առաջին հայր, որի անունը մեզ հայտնի է, եղել է 20-րդ դարի սկզբին Հեռավոր Արևելքի երկրներում և Ավստրալիայում դեգերած պոլսեցի, հետագայում ամերիկաբնակ գործարար և Հայ բարեգործական ընդհանուր միության բարերար անդամ **Երվանդ Հակոբյանը**:

Մարգարիտ որոնելու և մարգարտի առևտրով զբաղվելու նպատակով նա որոշ ժամանակ բնակվել է Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում, Ֆիլիպիններում (որտեղ ամերիկյան զինվորականների մեջ հանդիպել է մի հայի), Ավստրալիայում և չորս տարի՝ Պապուա Նոր Գվինեայում: Ավստրալիայից մեկնելիս մի օվկիանացի ընկերոջ հետ նստել է առագաստանավ, որտեղ որպես նավաստի եղել են հին մարդակեր գվինեացիներ: Նրանցից մեկը շոշափել է Հակոբյանի թևը և ասել, որ այս մարդը պարարտ է և հարմար՝ կերակուր դառնալու համար: Հակոբյանը, որն արդեն սովորել էր պապուասերեն, հասկացել է, և ամերիկյան տասհարվածյան հրացանը միշտ նավագների կրծքին բռնած՝ ճամփորդել է հինգ ցերեկ և հինգ գիշեր: Երկու ընկերները փոխնեփոխ, չորս ժամը մեկը, զենքը մեկը մյուսին փոխանցելով, սպառնալից ու զգուշավոր դիրքով կարողացել են անվտանգ կատարել իրենց ճամփորդությունը: Արդեն նավի մեջ Հակոբյանը սկսել է ուսումնասիրել մարդակերների կենցաղն ու բնավորության գլխավոր գծերը: Զարմանքով տեսել է, որ վայրենիները կոտորում են հանքային ջրի շիշը և ապակիով սափրվում՝ առանց մաշկը վնասելու կամ՝ անտառներում իրենց ոտնատակին, առանց ցավ զգալու,

կարում են կենդանու հաստ կաշիներ, այնքան կարծրացած է նրանց ոտքերի մաշկը:

Չորս տարի շարունակ Երվանդ Հակոբյանը մանրամասնորեն ուսումնասիրել է Նոր Գվինեայի բնիկների բարքերն ու սովորությունները: Լինելով երաժիշտ՝ նա ձայնագրել է 26 զանազան գվինեական եղանակներ, որոնք մտադիր է եղել հրատարակել՝ փաստորեն դառնալով գվինեացիների Կոմիտաս Վարդապետը: Այդ չորս տարվա ընթացքում իր ընկերներով միշտ նավի մեջ են գիշերել: Ծանոթացել է կառավարության անգլիացի փոստային կառավարչի հետ, որը 14-րդն է եղել այդ պաշտոնում, քանի որ նախորդ բոլոր պաշտոնյաները տարբեր ժամանակներում սպանվել և կերվել են: Անգլիացին պարզաբանել է, որ ինքն այդ վտանգավոր տեղն աշխատում է, քանի որ Անգլիայի 100 ֆրանկի փոխարեն ինքը 300400 ֆրանկ աշխատավարձ է ստանում:

Մի անգամ, երբ Հակոբյանը իր չորս ընկերների հետ գբոսնել է անտառում. հայորդուն իր պարթև հասակի համար խմբի առաջնորդ են ընտրել: Հանկարծ նրանք անտառի խորքում հայտնաբերել են, որ շրջապատված են մոտ 500 մարդակերներով: Ծառերի վրա դիրքավորվելով՝ հրաձգություն են սկսել, սպանել 67 պապուասի, մյուսները փախել են, սակայն մի նետ վիրավորել է Հակոբյանին: Բարեբախտաբար, նետը թունավորված չի եղել, այլապես նա ողջ չէր մնա:

Այս պայմաններում Հակոբյանին հաջողվել է որոշակի հարստություն կուտակել, Գվինեայի ծովափին անձամբ հավաքել է մարգարտի խեցիներ և ուղարկել է Փարիզ՝ իր հրեա ընկերներին, որոնք շահագործել են նրան՝ 100 ֆրանկի մարգարի-

տը 1000ի ծախելով: Հիվանդանալով դեղին տենդով՝ Երվանդ Հակոբյանը ստիպված վերադարձել է Եվրոպա, որտեղից էլ հետագայում տեղափոխվել է ԱՄՆ <sup>1</sup>:

### ՀԱՎԱՅԱՆ ԿՂՁԻՆԵՐ

1955-ին սփյուռքահայ մամուլում տեղեկացվել է, թե Կալիֆոռնիայի մասին գրքերից մեկում ակնարկվում են Հայկական կղզիները (Armenian Islands), որոնց նկարագրությունից պարզ է դառնում, որ խոսքը Հավայան կղզեխմբի մասին է: *«Արդեն «Հաւայան» եկած կրնայ ըլլալ «հայ» կամ «հա՛այ» բառէն: Ծանօթ է, թէ Հաւայան կղզիներու բնակիչները մասամբ սերունդն են Սիպերիոյ վրայով Խաղաղականի կղզիները անցած եւրոպացիներու»<sup>2</sup>*: Վստահաբար նկատի է առնված ամերիկացի պատմաբան Ջոն Ուոլթոն Քոֆիի (1902–1995) 1940 և 1953 թթ. հրատարակված «Կալիֆոռնիա» աշխատությունը, որտեղ «Հայկական կղզիները» հիշվում են Ճապոնիայից արևելք<sup>3</sup>: Քոֆին հղել է Հավայան կղզեխումբը հետազոտած իսպանացի ծովային Ֆրանսիսկո Գալիին (1539–1591), որն էլ մեջբերել է իր նավատարի կողմից «Հայկական կղզիներին» նկարագրությունը<sup>4</sup>: «Հայկական կղզիներ» անվան առկայությունը թյուրիմացության արդյունք է թվում<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Աղաթօն Ե. Գ.**, Ո՞վ է Երուանդ Յակոբեան եւ ի՞նչպէս բարերար անդամ եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, «Միութիւն», Գահիրէ, 1913, թ. 17, Մայիս, էջ 68-69: Նոյնի, Գաղափարի նշխարներ, Մարսէլ, 1934, էջ 67-72:

<sup>2</sup> Հայկական անուններ հեռաւոր երկիրներու մէջ, «Զարթօնք», Պէյրութ, 13.08.1955:

<sup>3</sup> Տե՛ս **John Walton Caughey**, California, PrenticeHall, 1953, էջ 70:

<sup>4</sup> Տե՛ս **John Walton Caughey**, California, PrenticeHall, 1940, էջ 70:

<sup>5</sup> Հարցի քննությունը մանրամասն տե՛ս **Վարդան Սատթնուսան**, Դրուագներ ԺԵ-ԺԹ. դարերի հայ-սպանական պատմամշակութային կապերէն, «Բազմավեպ», Վենետիկ, 2003, թ. 14, էջ 191-195, տե՛ս նաև՝ **Վահան Սարգսյան**, Հայկական կղզիները, «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում =

Հավայան կղզիների հետ հայ ժողովրդի առաջին հայտնի առնչությունը վերաբերում է Ցեղասպանությունից հետո սկիզբ առած հայանպաստ շարժմանը: Ըստ ավստրալահայ պատմաբան Վիգեն Բարկենյանի՝ 1919 թ. հիմնված Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության միջազգային կոմիսար, ամերիկացի կոնգրեգացիոնալիստ քահանա Լինքոլն Լ. Ուիրթը հայոց Ցեղասպանությունից փրկվածներին օգնելու նպատակով 1922–1923 թթ. մասնաճյուղեր էր հիմնել Հավայան կղզիներում, Ճապոնիայում, Չինաստանում, Կորեայում, Ֆիլիպիններում, Նոր Զելանդիայում և Կուրաչում: Նա իր առաքելությունը սկսել է Հավայան կղզիների Վայկիկի բնակավայրից՝ տեղական արքայական պալատում արժանանալով ջերմ ընդունելության: Միջոցառման ժամանակ ստեղծվել է հայերի օգնության հանձնախումբ, որի նախագահ է ընտրվել Հավայանների ամերիկացի նահանգապետ Սանֆորդ Բ. Դոուլը, քարտուղար՝ հայտնի միսիոներ դոկտոր Վիլյամ Դ. Վեսթերվելթի տիկինը: Նրանց ուղեկցությամբ Ուիրթն այցելել է կղզիներից յուրաքանչյուրի քաղաքը՝ հայերի համար օգնություններ հավաքելու: Ուիրթը վկայել է, որ յուրաքանչյուր համայնքում հանձնախմբեր են ստեղծվել, և Հավայան կղզիներից մեկնելիս նրա ձեռքին եղել է 50 հազար ԱՄՆ դոլար, կրկնակին՝ իր ակնկալածից: Հավայանների հայերի օգնության հանձնախումբը շարունակել է շռայլ նվիրատվություններ կատարել, և 1920-ական թթ. վերջին հավաքել է ավելի քան 200 հազար դոլար (այսօրվա արժեքով՝ մոտ 2.8 միլիոն դոլար), որն այն

---

Культура моря - культура человечества в диалоге цивилизаций», «Այսա» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2010 թ., մայիսի 14-16, խմբ. խորհուրդ՝ Է. Դանիելյան և ուրիշ., Երևան, 2011, էջ 70-71:

ժամանակվա համար հսկայական գումար էր<sup>1</sup>: Ի դեպ, սկսած 1916-ից, հավայան մամուլը («Հաուայան գազեթ», «Հոնոլուլու սթար բուլեթին») անդրադարձել է Ցեղասպանությանը և հայերին ուղարկվող մարդասիրական օգնությանը:

Թուրքիայում 20 տարի որպես միսիոներ աշխատած դոկտոր Ջոն Բ. Բրաունը 1921-ին Մաուիի միջնակարգ դպրոցում ելույթ է ունեցել՝ մեծ համակրանք գտնելով ուսուցիչների և աշակերտների շրջանում՝ պատմելով հայ տղաների և աղջիկների հերոսականության մասին: Նա մասնավորապես նշել է, որ հայերը, չնայած սակավաթիվ լինելուն, հրաշալի ժողովուրդ են, որոնք ապրում են սարսափելի պայմաններում, այնպես որ ամերիկացիները պետք է հնարավորինս օգնեն նրանց<sup>2</sup>:

Առաջին հայը, որը, մեզ հասած տվյալներով, հաստատվել է Հավայան կղզիներում, եղել է ուշագրավ մի անձնավորություն՝ տաղանդավոր նկարիչ, «հավայան Գոգեն» անվանված **Արման** (իսկական անունը՝ Թադևոս) **Մանուկյանը** (1904, Կ.Պոլիս – 1931, Հոնոլուլու): Հայ տպարանատեր Արշակ Մանուկյանի զավակը նախնական կրթությունն ստացել է Գալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանում: Մեծ եղեռնի նախօրեին, խուսափելով հալածանքներից՝ Արշակ Մանուկյանն ընտանիքով տեղափոխվել է Ֆրանսիա: 1920ին 16-ամյա Արմանին մայրն ուղարկել է Փրովիդենս (ԱՄՆ), որտեղ տղան սովորել է Ռոդ Այլենդի նկարչական դպրոցում: Զբաղվել է գրքերի ձևավորմամբ, աշխատակցել «Լեդրրներ» ամսագրին: 1923 թվականին ծառայության է մտել

---

<sup>1</sup> Տե՛ս **Babkenian Vicken**, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, “The Armenian Review,” New York, 10.11.2010:

<sup>2</sup> Տե՛ս **Hair Doris**, High School Students Hear About Armenians, “Maui News,” Maui, 11.03.1921:



ԱՄՆ նավատորմիդ, 1924-ին դարձել նավատորմիդի պատմաբան մայոր Էդվին Նորթ Մքքլեյանի համհարզը: Մեկ տարի անց, երբ Մքքլեյանը պաշտոնավարման է ուղարկվել Փըրլ Հարբոր (Հավայան կղզիներ), նա իր հետ տարել է Մանուկյանին: Վերջինս Մքքլեյանի գրած (և ցարդ անտիպ մնացած) ամերիկյան ծովային հետևակի կորպուսի՝ շուրջ հազար էջանոց պատմական ուսումնասիրության համար կատարել է 75 գծանկար: 1927-ին, զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, Մանուկյանը որոշել է մնալ և ստեղծագործել Հավայան կղզիներում: Հնոլուլուում աշխատակցել է տեղական ամսագրերին: 1928-ին դարձել է Հնոլուլուի արվեստագետների ընկերակցության անդամ: 1929 թվականին Արման Մանուկյանն ունեցել է իր առաջին անհատական ցուցահանդեսը: Խոր ընկճախտ ապրելով՝ նկարիչը 1931 թվականին ինքնասպանություն է գործել Հնոլուլուում<sup>1</sup>: Նրանից պահպանվել է հավայացիների կյանքը պատկերող 31 յուղանկար, որոնք ներկայումս շատ բարձր են գնահատվում (գտնվում են Բիշոփ և Հնոլուլուի արվեստի թանգարաններում և մասնավոր հավաքածուներում): 2010 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2011 թվականի ապրիլի 24-ը Հնոլուլուի Գեղարվեստի ակադեմիան կազմակերպել է «Գույնի իմաստը, գծի արտահայտչությունը. Արման Մանուկյանի մոդեռնիզմը» խորագրով: *«Իր պատկերները, ինչպես Փոլ Կոկենի Թահիթիի գործերը, անզոյ տեղի մը իտեալականացած վերապրումն են»*<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Արման Մանուկեան (1904–1931)՝հայ նկարիչ մը Հաուայի մէջ, «Օրեր», Պրահա, 2004, թիվ 12 (28), էջ 35-38 Տե՛ս նաև նույն հեղինակի Դանիել Վարուժանի աշակերտը Հաուայի մէջ հոդվածը (**Մատթեոսեան Վ.**, Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ, Անթիլիաս, 2009, էջ 328-331):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 330:

Հավանաբար Հոնոլուլուում հաստատված երկրորդ հայր եղել է **Վասկան Գուկարսովը** (Ոսկան կամ Վազգեն Դուկասով-Դուկասյան): Նա ծնվել է Թուրքիայում, կոտորածների հետևանքով տեղափոխվել Արմավիր (Ռուսաստան): Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հաստատվել է Հավայան կղզիներում, անունը փոխել Ալֆրեդ Ֆաուստ, ամուսնացել է ինդիանապոլսեցի ուսուցչուհի Ջեննիկի հետ, ունեցել զավակներ: Ինքնակրթությամբ ձեռք է բերել ճարտարագետի մասնագիտություն: Մահացել է 1958-ին, Մաուի կղզում: 1973-ին ԽՍՀՄում մնացած նրա եղբայրները դիմել են Հավայան կղզիներ և գտել են նրա ընտանիքին: Ալֆրեդ Ֆաուստի ընտանիքը նոր միայն իմացել է հոր ազգությունը, որին մինչ այդ ռուս է կարծել: Այդ առթիվ դուստրը՝ **Սոնիա Ֆաուստը** (1936–2014), գրել է «Հայրենիքից հեռու» ակնարկը, որ հրատարակվել է Նյու Յորքի «Արարատ» անգլերեն քառամսյա հանդեսում<sup>1</sup>: Հայկական ծագումով այդ հավայուհին մեծացել է Վահիավայում, Լոս Անջելեսում և Մաուի կղզում, որի Բալդվին միջնակարգ դպրոցն ավարտել է 1955 թվականին: 1959-ին ավարտել է Հավայան համալսարանը, որից հետո իրավաբանական կրթությունը շարունակել է Սան Ֆրանցիսկոյում: Որպես իրավաբան և փաստաբան պաշտոնավարել է Հավայան կղզիների նահանգի տարբեր պետական մարմիններում<sup>2</sup>:

1955-ին Հավայան կղզիներ է այցելել մի հայ հոգևորական և հայ մամուլին վկայել, որ Հոնոլուլուում ապրում են մի քանի

---

<sup>1</sup> Տե՛ս **Faust Sonia**, Far From the Fatherland, “Ararat Quarterly”, New York, volume XV no 1, Winter, 1974, p. 5: Հոր մասին տե՛ս նաև շապիկի երկրորդ էջին:

<sup>2</sup> Սոնիա Ֆաուստի մասին տե՛ս **Hope Judith**, Pinstripes and Pearls, Simon and Schuster, 2003, p. 165. **Sonia Faust**, Honolulu StarAdvertiser Obituaries (Posted On November 23rd, 2014):

հայեր՝ **Ռոյ Էսոյանը**, ամերիկացու հետ ամուսնացած Ֆրեզնոյում ծնված ծագումով մշեցի **Հակոբյան** ընտանիքի դուստրը, **Հակոբ Իսրայելյանը**, որը միաժամանակ ուսանել և դասավանդել է տեղի համալսարանում, ինչպես նաև «Ասոյշիեդ փրեսի» լուսանկարիչը Հավայաններում նույնպես հայ է եղել<sup>1</sup>: Այս անուններից ճանաչված է լրագրող Ռոյ (Գարեգին) Էսոյանը (1919, Ցուրուգա, Ճապոնիա – 2012): Կարնեցի ծնողների զավակ Էսոյանը կրթությունն ստացել է Շանհայում (Չինաստան), իսկ 1950-ականներին տեղափոխվել է Հոնոլուլու (Հավայան կղզիներ), որտեղ դարձել է «Ասոյշիեդ փրես» գործակալության թղթակից: Ռոյ Էսոյանի և ամերիկուհի Բեթսի Ռոյ Էսոյանի որդին՝ **Դեյվիդ Էսոյանը**, 25 տարի բնակվել է Ճապոնիայում, իսկ ներկայումս բնակվում է Հավայան կղզիներում: Այստեղ է բնակվում նաև Դեյվիդի քույրը՝ գրող **Սյուզան Էսոյանը**:

Կյանքի վերջին տարիներին Հավայան կղզիներում է բնակվել նաև ֆրանսիական թատրոնի հայազգի դերասանուհի **Նադեժդա Փիթոնան** (1916–<sup>o</sup>), ծնունդով թիֆլիսցի նշանավոր դերասան և բեմադրիչ Ժորժ Փիթոնի (Գեորգի Փիթոյան) դուստրը, որը Հոնոլուլուում դասավանդել է թատերական արվեստ, ուսանողների հետ բեմադրել Ժան-Բատիստ Մոլիերի թատերախաղերն անգլերեն:

Հայազգի ամերիկյան կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը (1911–2000) 1962-ին վեց ամիս ապրել է Հավայան կղզիներում, ուսումնասիրել տեղական և ճապոնական երաժշտություն, մաս-

---

<sup>1</sup> Տե՛ս **Աստղիկ ծ. վրդ.**, Սան Ֆրանսիսկոյէն դէպի Սիոնի, «Սիոն», Երուսաղէմ, 1955, Փետրուար, թ. 2, էջ 62: Նույնը տե՛ս Հայեր Հոնոլուլուի մէջ, «Յառաջ», Փարիզ, 29.03.1955:

նակցել է Հոնոլուլուի երաժշտության և արվեստի փառատոնին, որտեղ կատարվել է նաև նրա 15-րդ սիմֆոնիան:

1964-ին սփյուռքահայ մամուլը վկայել է, որ Հավայան կղզիներում բնակվում է տաս հայ, որոնցից երկուսն ամուսնացած են օտարազգիների հետ: Երեքն իրանահայեր են՝ Բոսթոնի երաժշտանոցն ավարտած **Հարմիկ Եղիազարյանը**, որը նվագում է Հոնոլուլուի սիմֆոնիկ նվագախմբում և երաժշտության դասատու է դպրոցում: Իրանահայ օրիորդ **Ռիտան** պաշտոնավարել է ապահովագրական ընկերության մեջ, իսկ երրորդ իրանահայ **Ավետիսյանը**, տնօրինել է «Պարսկական ոսկեղեն» խանութը: *«Այս իրանահայերը հայերու կարօտ կը քաշեն, իսկ միւսները քիչ մը ամերիկացած են»*<sup>1</sup>:

1967ին Հոնոլուլուի Հավայան համալսարանի ուսանող լիբանանահայ Սահակ Արսլանյանը հայ մամուլին գրած նամակում վկայել է, որ կղզիներում երեք հայ է բնակվում, երկուսը՝ պարսկահայ, մեկն՝ ամերիկահայ: Վերջինս տիկին **Բեյբըր Հացագործյանն** է, որն իրեն խնդրել է իր ավտոմեքենայի համար հայկական եռագույն դրոշ հայթայթել<sup>2</sup>:

1970-ից **Պերճ Պուշագճյանը** (անգլերեն գրվում է Բուշաքյան) Լոս Անջելեսից գաղթել է Հոնոլուլու և վկայել, որ 30 հայ է ապրում այնտեղ, բոլորն էլ՝ ամուսնացած հավայուհիների հետ<sup>3</sup>: Հետագա պրպտումները պարզեցին, որ Պերճ Պուշագճյանը ծնունդով եղել է Իսրայելից, 14 տարեկանից բնակվել է ԱՄՆում, որտեղ եղբայրների հետ զբաղվել է ոսկերչությամբ: Այժմ բնակ-

---

<sup>1</sup> Տասը հայեր կան Հավայեան կղզիներու մէջ, «Ազդակ», Պէյրուիթ, 22.06.1964:

<sup>2</sup> Տե՛ս **Աստղ**, Եռագոյնը հասցուցեք Հոնոլուլու, «Ազդակ», Պէյրուիթ, 16.02.1967:

<sup>3</sup> Տե՛ս Հոնոլուլուի հայ գաղութը, «Արեւ», Գահիրէ, 21.06.1970:

վում է Կալիֆոռնիայում, որտեղ տնօրինում է մի քանի ցուցաբերակ: Նույնպես ոսկերչությամբ են զբաղվել Հավայան կղզիներում բնակված **Վիկտոր** և **Արի Գալուստյան** եղբայրները: «Վիքթորը ջրվըլրի» ոսկերչական կենտրոնը ղեկավարել է Վիկտորը և իր կիները: **Բոյաջյան ընտանիքը** Հավայաններում տնօրինել է «-Լեոգ տավերնա» ռեստորանը: Հայկական և Ճապոնական ծագում ունի **Սյուզի Ֆիլդը**՝ Հոնոլուլուի ամենանշանավոր փաստաբան Ռիք Ֆրիդի կինը, որը մոդել է և անշարժ գույքի գործակալ<sup>1</sup>:

2009-ին Երևանում կայացած ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպած իրավաբանների համահայկական առաջին համաժողովին մասնակցել է նաև փաստաբան, Հայ իրավաբանների միջազգային միության անդամ **Դոուն Շահբազյան-Սմիթը**՝ Հոնոլուլուից: Հայրն ամերիկացի Ֆրանք Սմիթն է, մայրը՝ Գրեյս Շահբազյանը, որի մայրը՝ Արշալույսը, եղել է Գուրունից (Սեբաստիա): Գրեյսը դստերն անվանել է Դոուն (անգլերեն՝ արշալույս) ի պատիվ իր մոր: Հավայաններում և ԱՄՆ այլ նահանգներում փաստաբանական կարիերայից բացի Դոուն Շահբազյան-Սմիթը զբաղվել է նաև կինոյով, իր սցենարով նկարահանել է մի կատակերգություն թուրքական բանտում մեծացած և հայերեն խոսող Դրակուլայի մասին, որը երկու հայ որբերի օգնում է գտնել Հոնոլուլուում գտնվող իրենց հորեղբորը: Ֆիլմը ցուցադրվել է Հավայանների հեռուստատեսությամբ. «Յունիվիժըն» ընկերությունն այն հեռարձակել է երկու տարի շարունակ<sup>2</sup>: Դոունն ամուսնա-

---

<sup>1</sup> Տեղեկությունը՝ Դոուն Շահբազյան Սմիթի (2017 թ. մայիսի 8ի էլեկտրոնային նամակ):

<sup>2</sup> **Բաֆֆի Ն. Մ., Դոուն Շահբազյան-Սմիթ.** Հայաստանից վերադառնալուն պես պետք է զբաղվեմ Հավայան կղզիներում հայ համայնքի կազմակերպմամբ <http://nt.am/am/news/54989/> (այցելությունը՝ 25.11.2010):

ցած է նիկարագուացի Ըրլ Մալպարտիդայի հետ, ունի մեկ որդի՝ ամուսնացած չինուհու հետ

Դոուն Շահբազյան-Սմիթի վկայությամբ՝ Հավայան կղզիներում բնակվում է շուրջ 100 հայ: Չունենալով հայկական եկեղեցի՝ մեծ մասը հաճախում է հունական եկեղեցի: Նրանցից շատերը ներգաղթել են Հայաստանից, որոնցից է նաև **Մարգարիտ Լավոիեն**՝ Հավայանների նահանգային դեպարտամենտի արտասահմանյան ծառայության պաշտոնյա, որպես «Խաղաղության կամավորներ» կազմակերպության անդամ, Հայաստանում որոշ ժամանակ բնակված և Գավառի պետական համալսարանում դասավանդած Ֆրանկ Լավոիեի կինը: Ֆրանկ Լավոիեի ջանքերի շնորհիվ Հավայան կղզիներում մեծացել է իրազեկությունը Հայոց ցեղասպանության մասին, մտադրություն է եղել Հնոտլուլուի կենտրոնական այգում տեղադրել խաչքար (2017-ի տվյալով՝ տակավին չիրագործված): 2014-ից Լավոիե ամուսիններն ապրում և աշխատում են Բրազիլիայում:

Ի դեպ, Հավայան կղզիներ նահանգը 2014-ին ճանաչել է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հանրապետությունը՝ դառնալով ԱՄՆ 7-րդ նահանգը, որը ճանաչել է Արցախի անկախությունը: Չնայած ԱՄՆում Ադրբեջանի դեսպանատան ճնշումներին՝ Հավայանների ներկայացուցչական պալատն ընդունել է այդ փաստը, այն էլ՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Վաշինգտոն կատարած այցից 24 ժամ առաջ: Այս գործում կարևոր դեր են խաղացել ներկայացուցչական պալատի անդամներ Անգուս Մքքելվին և Ջոն Միզունոն: Արցախյան խնդիրը լուսաբանելու գործում մեծ է եղել Հնոտլուլուից փաստաբան **Արթուր Արթենյանի**, նաև **Ռուդի Դեքերմենջյանի** և այլ հայերի դերը: Նրանց շնոր-

հիվ Հավայանների օրենսդրությունը հանրային քննարկման է ենթարկել և մերժել Ադրբեջանի մի քանի հակահայկական նախաձեռնություն<sup>1</sup>: Հայկական շահերի պաշտպանության և ադրբեջանական հարձակումներին դիմակայելու գործում հատկապես կարևոր դեր են խաղացել Հավայանների հայ համայնքի երեք ակտիվ անդամները՝ **Արփինե Ֆիյան Մարը, Արթուր Մարտիրոսյանը** և **Անի Մարտիրոսյան Մենսը**<sup>2</sup>: Իսկ 2015 թվականին մասնավորապես վերոհիշյալ Ֆրանկ Լավոիեի և Արթուր Արթենյանի ջանքերով Հավայան կղզիների սենատը պաշտոնապես ճանաչել է 1915 թվականի հայոց Ցեղասպանությունը, և ապրիլի 24-ը հայտարարվել է հայոց Եղեռնի զոհերի հիշատակի օր<sup>3</sup>:

### **ՊՈԼԻՆԵԶԻԱ**

Ֆրանսիայի գաղութ Պոլինեզիայում և հատկապես Թաիթի կղզում ապրել և աշխատել են հատուկենտ ֆրանսաբնակ հայ գործիչներ:

Այստեղ հայտնված առաջին հայը եղել է զինվորական գործիչ **Ռուբեն Միրիմանովը** (24.04.1894, Թիֆլիս – 22.10.1967, Արուև, Օվկիանիա): Ծնվել է Սուրեն Միրիմանովի և Ելենա Սենկոսկայայի (հավանաբար՝ լեհ) ընտանիքում: Լինելով սպիտակգվարդիականների կազակական հեծելազորի սպա՝ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բնակվել է Ֆրանսիայում, ծառայել զինված ուժերում: 1942-ին զեներալ Շառլ դը Գոլի կողմից ուղարկվել է Օվկիանիա՝ ռազմական ծառայության: Թաիթի կղզում աշխա-

---

<sup>1</sup> Hawaii Recognizes Nagorno Karabakh Republic's Independence, "Asbarez," Los Angeles, 3.04.2015.

<sup>2</sup> Hawaii Rejects Azeri Lies, "Asbarez," Los Angeles, 12.02.2014.

<sup>3</sup> St' u Hawaii State Senate Recognizes Armenian Genocide, "Asbarez," Los Angeles, 3.04.2015:

տել է գյուղատնտեսության և ձիաբուծության ասպարեզում: 1944ին ամուսնացել է թախտուհի Աննա Ուրատուա Ալենի (ծն. 31.05.1919, Պապեետե) հետ, ունեցել երեք դուստր՝ **Գալինա** (1945), **Նատաշա** (1947) և **Միլիցա** (1949): 1945-ին կնոջ հետ հիմնադրել և մինչև 1958-ը ղեկավարել է ձիասպորտի դպրոց Պապեետեում: Հաճախ ճամփորդել է Ֆրանսիա, այնտեղից ներմուծել է ձիեր: Նրա մահից հետո գործը շարունակել են կինը և դուստրերը: Միրիմանովի անունը տեղ է գտել 1975-ին հրատարակված «Թախթուհիներ» տեղեկատուի մեջ<sup>1</sup>: 2012ին նրա այրին՝ 93-ամյա Աննա Միրիմանովն արժանացել է Ֆրանսիայի Արժանյաց շքանշանին:

Մեզ հաջողվեց էլեկտրոնային նամակագրություն հաստատել Պունա՝ աույայում (Ընկերության կղզիներ, ֆրանսիական Պոլինեզիա) բնակվող Նատաշա Միրիմանովի հետ՝ խնդրելով լրացուցիչ տվյալներ իրենց ընտանիքի մասին և լուսանկարներ: 2016-ի հոկտեմբերի 30-ին հայթաիթական ծագումով այդ կինը մեզ գրեց, որ իրենց հորաքույր Ջուլյա Միրիմանովան ամուսնացել է Յուրի Մադաքյանի հետ, ապրել Երևանում. նրա որդին է աստղաֆիզիկոս, Բյուրականի աստղադիտարանի փոխտնօրեն Տիգրան Մադաքյանը, որի հետ իրենք կապ են ունեցել: Այս նամակում ամենահետաքրքրականը Նատաշա Միրիմանովի այն վկայությունն է, որ Պոլինեզիայում կա հայկական փոքր մի ընկերակցություն: 2016-ի նոյեմբերի 9-ին գրված նամակում էլ վկայել է իր և քույրերի մասին. *«Գալինան ունի մի որդի, անունը՝ Ռուբեն, նրա թոռնուհին է Մելեանան, ինք տարեկան: Միլիցան զավակ չունի, բայց ունի մի շուն ու մի կատու... ունի նաև ամուսին: Ես*

---

<sup>1</sup> Sté u O'Reilly Patrick, Teissier Raoul, Tahitiens, Paris, 1975, p. 392:



*ունեն որդի՝ Վլադիմիր, որը 38 տարեկան է և մի թոռ՝ Վոլոդյա, որը վեց տարեկան է»։* Հետաքրքրական է, որ այդ թախիծուհիներն իրենց զավակներին կոչել են հոր անվամբ և ռուսական անուններով:

Ֆրանսիական Պոլինեզիայում է պաշտոնավարել նաև ֆրանսիական պետական գործիչ **Ժաք (Արշակ) Սուրադյանը** (14.12.1910, Կոնշ-ան-Ուշ, Ֆրանսիա – 14.06.1992, Փարիզ): Ուսանել է Սևրի Մխիթարյան և Փարիզի Արևելյան լեզուների դպրոցներում, մասնագիտացել գրականության և իրավաբանության մեջ: Պաշտոնավարել է աֆրիկյան Չադ, Սենեգալ, Հասարակածային Գվինեա, Նիգեր, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Մադագասկար պետություններում, այնուհետև 1963–1965 թթ. եղել է Օվկիանիայում ֆրանսիական Նոր Հեբրիդյան կղզիների (ներկայումս՝ Վանուատուի Հանրապետություն) կառավարիչ, 1969–1973 թթ.՝ Հնդկական օվկիանոսում գտնվող Կոմորյան կղզիների կառավարիչ: Եղել է Հարավ-խաղաղօվկիանոսյան հանքարդյունաբերական ընկերության նախագահը: Արժանացել է «Պատերազմի խաչ» և «Պատվո լեգեոն» պատվանշանների<sup>1</sup>:

Ռազմական գործիչ, կապիտան **Ժորժ Աստվածատրյանը** (ծն. 1930) 1977-ին պաշտոնի է նշանակվել Պոլինեզիայում դառնալով Թախիծի կղզու վարչական կենտրոն Պապետեի քաղաքային մարմնի ընդհանուր հրամանատարը: Նախապես եղել է Կլամարի քաղաքային մարմնի ոստիկանության հրամանատար<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Sté u Tribunal mixte de commerce de Noumea, «Journal officiel de la Nouvelle Calédonie», 17.05.1999:

<sup>2</sup> Sté u Հայեր մինչև Փոլինեզիա..., «Յառաջ», Փարիզ, 25.11.1977:

Հայազգի ֆրանսիական ռազմական գործիչ **Ալեքսանդր Տեր-Մարկիսովը** (1911, Փարիզ – 1991, Նիա) Աֆրիկայում և Հնդկաչինում պաշտոնավարելուց և թռչակի անցնելուց հետո որոշ ժամանակ բնակվել է Թաիթիում:

Դիվանագետ Հենրիկ Լիլոյանը խորհրդային ժամանակներում «Ոգնի» երգիծաթերթում որպես արտառոց փաստ վկայել է, որ Պապեետեում բնակվել է մի ֆրանսահայ՝ ֆրանսուհի կնոջ և երկու զավակի հետ, զբաղվել առևտրով և նամակով խնդրել է Լիլոյանին՝ իրեն հայերեն դասագրքեր ուղարկել՝ զավակներին հայերեն գրել-կարդալ սովորեցնելու համար<sup>1</sup>:

Վերջում հիշենք, որ երևանցի Արմեն Բաբայանը 2001ի սեպտեմբերին մեզ տեղեկացրել է, որ իր հորաքրոջ ամուսինը՝ վլադիվոստոկցի ծովային Միխայիլ Յակովևիչ Բերկովիչը, 1960-ականներին Ֆիջիում խորհրդային պատվիրակության հետ հանդիպում է ունեցել մայրաքաղաք Սուվայի քաղաքագլխի հետ: Վերջինս հետաքրքրվել է հյուրերի ընտանիքներով և լսելով, որ Բերկովիչն ամուսնացած է Շոդակաթ անունով հայուհու հետ, հանդիպումից հետո Բերկովիչին առանձին հայտնել է, որ ինքը նույնպես հայ է: Այս անձի ինքնությունը, սակայն, չկարողացանք ճշտել: Ենթադրում ենք, որ խոսքը կարող է վերաբերել Սուվայի քաղաքային խորհրդի անդամներից մեկին, որոնց թվում 1960-ականներին եղել են նաև վեց եվրոպացիներ:

Ինչպես տեսնում ենք, ավելի քան մեկ դար առաջ Օվկիանիայում հայտնված հատուկենտ հայերի ներկայությունը նշանավորվել է տեղացիների կյանքում կարևոր գործերով (տեղաբնիկներ-

---

<sup>1</sup> Այս մասին տե՛ս նաև **Բախչինյան Ա.**, Հայկական նշմարներ, «Անդրադարձ», Երևան, 1993, հունվար:

րի երգերի գրառում հայի միջոցով, տեղական բնապատկերների ստեղծում հայ նկարչի կողմից, հայազգի գործիչների վարչական աշխատանք): Համադրելով և վերհանելով այս փաստերը՝ ևս մեկ գույն է ավելանում հայ Սփյուռքի գունապնակին, թերևս՝ ամենից հեռավորն ու տարաշխարհիկը: Անշուշտ, «Սփյուռք» եզրույթը գործածում ենք որոշ վերապահումով. ինչպես տեսանք, միայն Հավայան կղզիներում գոյություն ունի հայ համայնք, իսկ Պոլինեզիայի հայերի միության մասին տեղեկությունը ճշտված չէ:

## THE ARMENIAN PRESENCE IN OCEANIA

(Summary)

ARTSVI BAKHCHINYAN

This paper presents random few facts of temporary and permanent presence of the Armenians in Oceania. The first Armenian who appeared in the region was musician Yervant Hagopian from Constantinople. In the beginning of the 20<sup>th</sup> century, he lived in Papua New Guinea for four years and was engaged in pearl hunting. He had mastered Papua language, recorded 26 Guinean songs and lived an adventurous life on the islands.

Although some sources mention so-called Armenian Islands in the East of Japan, which identify with those of Hawaiiis, this seems to be a misunderstanding. In 1922, Rev. Dr Lincoln L. Wirt, the International Commissioner of the Near East Relief organization, visited Hawaii, where he formed an Armenian Relief Committee. By the late 1920's, Hawaii's Armenian Committee had successfully collected over \$200,000 (about \$2.8 million dollars in today's terms) for the Near East Relief. The Hawaiian

Islands are the only place in Oceania where there is an Armenian community. Honolulu-based artist Arman Manookian (1904-1931) was called the Hawaiian Gauguin. In the 21<sup>st</sup> century around 100 Armenians lived in Hawaii. Due to their efforts, the state of Hawaii recognized the Republic of Artsakh (Nagorno Karabakh) in 2014 and the Armenian Genocide in 2015.

There were also several Armenian inhabitants in French Polynesia, like, Rouben Mirimanoff (Mirimanian) originally from Tiflis (Tbilisi), who had established a hippodrome in Papeete - capital of French Polynesia. His three half-Tahitian daughters live in Polynesia until today. Some French Armenians were appointed as French officials: Jacques Mouradian was the High Commissioner-Resident of French New Hebrides in 1963-1965, while Georges Asdvadzadurian was elected as the Chief Commander of Papeete City Council in 1977.